կարծես։ Արդարացաւ այն ողբն, որ իր մեր-ճաւոր Ալեքսանդրոպոլ (այժմ Լենինական) քաղաքի ընիկներից, զգայուն սրտի տէր մի եկեղեցական վաղուց յօրինել էր նրա վրայ։ Այս ողբն եւս կենդանացաւ եւ Կովկասի հայ ժողովուրդը վերստին սկսաւ երգի ձեւով զարթեցնել բազմաչարչար քաղաքի յիշատակը։ Ահա այդ ողբի սկզբնական տողերը.

«Անի քաղաք նստէր կու լայ
Չկայ ըսող մի լայ, մի լայ... [18]»։

(Շարունակելի։) ՍԱՐՈԽԱՆ

ՅՈՒՅՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ Ի ԲՈՒԼԳԱՐԻԱ

(Շարունակութիւն։)

21.

ԺԱՄՈՒ ԳԻՐՔ (ԿԱՄ ՀԱՒԱՔԱԾՈ՝Յ)

Ի ՊԱԶԱՐՋԻԿ

ԹՈՒՂԹՔ՝ 549։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26½ × 20½ × 11½։ — ԹԵՐԹՔ՝ այժմ իբր 46, իւրաքանչիւրը 12 թուղթ, մէկ մասը զուրկ թղթաթիւրէ, գրչէն նշանակուած չելլալով։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, 21 × 16½, ներքին լուսանցք՝ 1 սնթմ.։ — ՏՈՂՔ՝ 34—35։ — ՆԻՒԹ՝ թուղթ հաստ եւ ողորկեալ։ — ԿԱԶՄ՝ փայտեայ հին կաշեպատ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չունի։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ գէշ է։ Առաջին կողքի կաշին պատռած։ Ինկած են մի քանի թերթեր ընդ մէջ թղ· 294—295, 299—300ի եւ վերջաւորութեան։ Պակուած կը կարծուին նաեւ Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս աւետարանիչներու նկարները՝ իւրաքանչիւրի սկզբնաւորութեան — ԴԱՏԱՐԿ՝ թղ· 2բ, 208ա։ — ԳԻՐ՝ նստրագիր, տեղ տեղ փոքրիկ տարբերութիւններով, կարծես ուրիշ գրչէ ելած ըլլային։ — ԶԱՐԴԱՓԻՐՔ՝ անհամար, գրեթէ ամէն գլխոց սկիզբը, մեծ մասամբ բազմագոյն։ — ԽՈՐԱԳԻՐՔ՝ Սկզբնատողմ եւ Սկզբնատառմ՝ յաճախ կարմիր կամ բազմագոյն։ — ՆԿԱՐՔ՝ 3 հատ, ամբողջ էջերու վրայ, որոնք կը ներկայացնեն՝ թղ· 1բ՝ Սաղմոսաց սկիզբը՝ Դաւիթ· թղ· 208բ՝ Յիսուսի ծնունդը· թղ· 430բ՝ Աւետարանների սկիզբը՝ Մատթէոս, հաւատաց գործեր։ — ԽՈՐԱՆՔ՝ 4 հատ (թղ· 3ա, 209ա, 300ա եւ 431ա)։ Բազմերանգ, սովորական գործեր։ — ԽՈՐԱՆԻԿՔ՝ 3 հատ (թղ· 46ա, 81ա, 99բ)։ — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ 26 հատ։ Միջակ աշխատութիւններ՝ երկու (կարմիր եւ կապոյտ) եւ աւելի գոյներով։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ 622 հատ, ճոխ, պլազան։ — ԺԱՄԱՆԱԿ՝ Ռ.ՃԺԶ—Ռ.ՃԺԼ (=1667—1668)։ — ԳՐԻՉ՝ Տէր Գրիգոր քահանայ, որդի խոճա Միքայէլի։ — ԾՆՂԿՈՂ՝ անշուշտ նոյնը։ — ՏԵՂԻ՝ «Պուղտանու Սէհրաբ քաղաք»։ — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ բազմաթիւ. բուն գրչէն կաւորբ՝ թղ· 45բ, 81ա, 99ա, 207բ, 395բ, 533բ, մանուսբ՝ թղ· 40բ, 199ա, 269ա, 337բ, 362ա, 364ա, 367ա, 386ա, 429բ· Նորբ՝ թղ· 1ա, 2ա, 207բ, 430ա, 508բ, 548ա, 548բ։ — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Պաղարջիկի Ս· Ստեփանոս եկեղեցւոյ։

Մատեանս է ԺԱՄՈՒ ԳԻՐՔ, ուր ի մի ամփոփուած են պաշտաման կարեւոր մատեանք, որոնց մասին կայ եւ ցանկ մը սկիզբը՝ թղ· 1ա, որ է՝

«Այս է ցանկ զբրքիս որ կամիս գիտել· — Սաղմոս է Դաւիթ· Երանեալ է այր որ ոչ գնաց ի կատարեալ ըստ կանոնն, Ա։ ‖ Աղաւթք մատոյց, կատարեալ· Տէր եթէ զշրթունս իմ բանաս բերան իմ երգեսցէ· Բ։ ‖ Տաւնացոյց· կատարեալ սկիզբն մինչեւ վերջն· Գ։ ‖ Շարակնոց, կատարեալ է ամենայն սրբոց առաքելոց մարգարէից վարդապետաց մարտիրոսաց եւ այլ ամենայն սրբոց· Դ։ ‖ Տարոյ գիրք· կատարեալ որք գրեցաւ ամենայն սրբոց· Ե։ ‖ Աւետարանք, կատարեալք Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս· Զ։ ‖ Մաշտոց վարդապետի դասացեալն· Կնունքն երեխայից· Է· ‖ Զպսակ աւրհնէքն· Ը։ ‖ Հաղորդութիւն· Թ։ ‖ Աչխարհաթաղն եւ զայգւոջ· Ժ։ ‖ Տղայաթաղն· եւ զայգւոջն· ԺԱ։ ‖ Տնականն եւ զաղ աւրհնէքն· ԺԲ։ ‖ Ողէհանդիպտ· ԺԳ։ ‖ Զխաչ աւրհնէքն եւ զօծումն· ԺԴ։ ‖ Զեւթներբեակն կատարեալ այրէն մինչեւ ի քէն, որ է պարզատումար· բայց սերտ ուսիր որ չի մոլորիս· եւ հոգովդ չորիս։»

Մատեանս ունի սա գլխաւոր բաժանմունքը.

1· Թղ· 3ա—45բ· Սաղմոս *ամբողջ՝ բաժնուած կանոնագլխոց, զուրգայից եւ սաղմոսաց (կը սկսի՝ «Երանեալ է այր որ ոչ գնաց ի խորհուրդ ամբարշտաց...»)։*

2· Թղ· 46ա—81բ· Ժամագիրք։ *Սկիզբն՝ «Տէր եթէ զշրթունս իմ բանաս...»։*

3· Թղ· 81ա—99ա· Տօնացոյց։ *Սկիզբն՝ «Աստուածայայտնութեան ճրագալուցին առաջի աւուր գիշերն կանոնագլխին· փառն..»։*

4· Թղ· 99բ—207բ· Շարակնոց։ *Սկիզբն՝ «Երգեցէք որդիք Սիոնի Երգ նոր...»։*

5· Թղ· 209ա—429· Ճաշոց· *որուն մէջ կան տարւոյն ամէն օրերուն ընթերցուածք։*

Ունի հետեւեալ գլխաւոր բաժանմունքը, որոնց իւրաքանչիւրը կը սկսի խորանով կամ կիսախորանով.

Ա· Թղ· 209ա—236ա· «*Եւ հովիւք էին ի տեղ(ւ)ոջն յայնմիկ բացաւթեացք որ պահէին...*»։

Բ· Թղ· 236ա—299բ· «*Բուն բարեկենդանին է առաւտու... Ճրագ մարմնոյ ակն է...*»։

Գ· Թղ· 300ա—337բ· «*Ընթերցուածս ի գործոց առաքելոցն։ Զբանն առաջին զոր արարի վասն ամենայնի...*»։

Դ· Թղ· 338ա—367ա· «*Երանելոյն Ներսէսի ասացեալ ի զալուստ հոգւոյն սրբոյ*»։

Ե· Թղ· 367ա—386բ· «*Ի մեծի աւուր պայծառակերպութեան տօնին· Առաւօտուն ելանեն ի թաբոր...*»։

Զ· Թղ· 386բ—395բ· «*Կիրակի ննջումն է Ամենաւրհնեալ սուրբ Աստուածածնին։ Առաւօտուն եւ ճաշոյն...*»։

Է· Թղ· 396ա—429բ· «*Մեծի եւ կենսակիր սրբոյ Խաչին Կիրակէ Առաւօտին... ընթերց· Ցառակաց· Դարձեալ եթէ ոք ի նաւ ելեալ...*»։

6· Թղ· 431ա—508բ· Աւետարան։

ա· Թղ· 431ա—452ա՝ *Մատթէոս։*

բ· Թղ· 452ա—465բ՝ *Մարկոս։*

գ· Թղ· 466ա—490ա՝ *Ղուկաս։*

դ· Թղ· 490ա—508բ՝ *Յովհաննէս։*

7· Թղ· 509ա—533ա· Մաշտոց։

Ա· Թղ· 509ա—512բ՝ *Կանոն Մկրտութեան։ Ասեն սաղ· ի թիւ· տէր ոչ բարձրացաւ սիրտ Գ անդամ ասեն· եւ ապա քահանայ զաղաւթս ասէ· Տէր Աստուած մեր Աստուած բարերար։*

Բ· Թղ· 512բ—514բ՝ *Կանոնն պսակ դնելոյ։ Սաղ· Տէր ի զօրութեան քում...*

Գ· Թղ· 514բ· *Կանոն պսակ վերացուցանելոյ։*

Դ· Թղ· 514բ—515բ· *Կանոն հաղորդ տալոյ։*

Ե· Թղ· 515բ—519բ· *Կանոն համաւրէն ննջեցելոց ի թաղման։*

Զ· Թղ· 519բ—521ա· *Կանոն առաւօտուն ի գերեզման երթան։*

Է· Թղ· 521ա—523բ· *Կանոն Տղայ թաղ առնելոյ։*

Ը· Թղ· 523բ—524ա· *Առաւօտուն· այգոյն սաղմ· Աւրհնեցէք մանկունք զտէր։*

Թ· Թղ· 524ա—526ա· *Կանոն· Ողեհանդիպտ առնելոյ ննջեցելոց։*

Ժ· Թղ· 526ա—526բ· *Եւ ապա աւրհնեն զաղն նախ ասեն սաղմ.։*

ԺԱ· Թղ· 526բ—528ա· *Կանոն տօնական աւրհնեալ Աստուածածնին գիտոտովանեալն ի զուտն եկեղեց(ւ)ոյ։*

ԺԲ· Թղ· 528ա—533ա· *Կանոն խաչ աւրհնելոյ· բերեն եկեղեցին եւ լուանան։*

8· Թղ· 533բ—535ա· Պարզատումար, *մի քանի ծանօթութիւններով [տես Յիշատակագրութեանց կարգին]։*

9· Թղ· 535բ—547բ· Եւթներեակ Դ·։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ։ (*Բուն գրչէն են*)՝ 1· Թղ· 40բ· *Զառածեալս Գրիգոր երէցս յիշել աղաչեմ, միով հայր մերիւ։ Թվ· Ռ.ՃԺԶ (=1667)։*

2· Թղ· 45բ· *Փառք ներողութեան Աստուծոյ· եւ մարգասիրութեան որ եւ կարողութիւն ծառային իւրոյ եւ կատարեց զսաղմոս Դաւթեան Թվ· Ռ.ՃԺԶին (=1667) եւ հոկտեմբեր ամսոյ ԺԹ·ին աւրն ուրբաթի ձեռամբ մեղաւոր Գրիգոր քահանայի անարժան եւ անպիտան ծառայիս Աստուծոյ։ Կարողութեամբն Աստուծոյ սկսեցի հոկտեմբեր Ա· եւ կացաւ ԺԹ·ին։*

3· Թղ· 81ա· *Թվ· Ռ.ՃԺԶ· Փառք ամենասուրբ երրորդութեան որ եւ մեղաւորիս ժամ, սկսեցի հոկտեմբերի ԺԹ· եւ օգնականութեամբ հոգւոյն սրբոյ կատարեցաւ հոկտեմբերի Լ· օրն գշի· ձեռամբ սուտանուն Գրիգոր քահանայի սէհրաթի քաղաքացւոյ։*

4· Թ· 99ա· *Կարողութեամբն Աստուծոյ· սկսեցի զսօնացոյցս գրել հոկտեմբերի Լ եւ օգնութեամբն սուրբ հոգւոյն· աւարտեցաւ նոյեմբերի Զ օրն գշի·։ Թվ· Ռ.ՃԺԶ ձեռամբ մեղաւոր տէր Գրիգորի որդոյ խոճա Միքայէլին։*

5· Թղ· 207բ· *Ըսկսայ· կարող Աստուծոյ զօրութեամբն գրել զշարակնոցս· նոյեմբերի Է· եւ օգնութեամբն սուրբ հոգւոյն· աւարտեցաւ դեկտեմբերի ԼԱ թվ· Ռ.ՃԺԷին (=1668)։ Ձեռամբ անարժան տէր Գրիգորի սուտանուն քահանայի որ միայն անուամբս կամ եւ հեռի եմ ի ճշմարտութենէն։*

6· Թղ· 337բ· *Ձեռամբ գրեցաւ տէր Գրիգոր սուտանուն քահանայի Թվ· Ռ.ՃԺԷ փետրվար ամսոյ ԻԶ օրն գշի·։ Քառասուն մանկանցն· ի մեծ պահքն բարով զատիկ զայ։*

7· Թղ· 386բ· *Զմեղաւորս՝ զառածեալս՝ զանպիտանս՝ անօգուտս՝ զանարժանս՝ յիշել աղաչեմ միով հայր մերիւ եւ Աստուած*

---

[18] *Ողբի հեղինակն եկեղեցական է Ադեքս· վարդապետ Աբրահամեան (վախճ· 1888ին), Անդրկովկասի «Հայ-կաթոլիկաց Հոգեւոր Վարչութեան» ի երբեմն աւագ անդամը։*

© National Library of Armenia

ողորմի ասելն չխնայէք։ Ինձ՝ Գրիգորիս. եւ ծնողաց իմոց. անուցցուցիս։ Թվ. ՌՃԺԷ։

8. Թղ. 533բ. (Իբր նախագրութիւն Պարզատումարի). Թվ. ՌՃԺ. բանալի առաջի գիրն ո՛նէ։ Եւ տանուտէրն ի վերեւն խոյն է։ Եւ կարմիր գրած տողերն նահանջ է... Պարզատումարս գովելի՝ է գեղեցիկ եւ պիտանի՝ գիրոյր տարին յինքեան ունի... է սահմանած անփոխելի, մինչ ի գալուստն Քրիստոսի որք ընթեռնուք սիրով սրտի, յիշման առէք զմեզ արժանի զԳրիգոր երէց մեղօք ի լի։

Ծանիր ով ընթերցող. հոգոյ զալ. կիր. օրն. բար.է Եղիական պահոցն... եւայլն։

9. (Նոր գրիչներէ)՝ Թղ. 1ա. Ես Շուռութցի Ճարակէնց մահտեսի Նիկողոսի որդի Աւումբս գրեցի Թվին Փրկչին 1706 եւ Թվական մերոյ ՌՃԾԵ եւ յամսեանն Փետրվարի ի Պաղարջկուսն։ (Աւելի վար՝ նոյն գրչէն՝) Առ զձեզ աղաչեմ հայրք եւ եղբարք եւ որքըզ հանդիպիք յայսմն տեղիս մի բերան ասացէք Աստուածն յամենայնի իւր բանն ի բարին յառաջնորդէ։ (Աւելի վարը՝) Ես Աւումս գրեցի (տակը թուանշաններ՝ անընթեռնելի)։

10. Թղ. 207բ. Աւաք կողմն է գայ զօրութեանց թագաւորութեանն եկէ այս ասա.

Ես շուռութցի մահզասի Նիկողոսի որդի աւում եաայ ձայն քաղեց շարականոցէն արդ յիշեցէք միով հայր մերիւ։

11. Թղ. 508բ. Ես շուռութցի ճարակէնց Նիկողոսի որդի Աւումբս գրեցի Թվին Քրիստոսի ՌՃՁին եւս Թվականիս Հայոցըս ՌՃԾԵին բաղարջիկուսն եւ որ հանդիպեսցի մայ. միով հայր մերիւ յիշեսցի զծնողսն իմ. եւ ինքն յիշեալ լնի գալստեանն Մեսիայի։

12. (Տարբեր գրչէ). Թղ. 548բ. Ես տէր մանուկըս եկի ի Պաղարճուկն Թվին ՌՃԾԵ (=1709)ին յունվարի ամսուն ԺԲին։ (Աւելի վարը՝) Տէրըն մեր Յիսուս Քրիստոս կու հրամայէ ի փրկական սուրբ աւետարանին ասելով թէ ուր զանձն ձեր է անդ եւ սիրտք ձեր եղիցին։ Հրեշտակըն ասէ առ սուղուկեցիսն անուն կենդանու ունիք ապա մեռեալ էք։

13. (Այլ գրչէ). Թղ. 1ա. Ես ակնցի տիրացու առաքելի որդի Անգօնս գրեցի Թվ. ՌՃՂԱ (=1742)ին օգոստոսի Բին եղեւ Պաղարջիկուսն ով որ կարդայ մէկ հայր մեղայիւ յիշեն յիշեալ լինիք ի Քրիստոսէ։

14. Թղ. 2ա. Ի Թուին հազար հարիւրի ինանասուն եւ երկուի (=1743) եւ ի ամսեանն յունուարվրի. տասնու եւ ի հինգ ի ժամանակս հայրապետի էջմիածնայ սուրբ աթոռի Ղազար կաթողիկոսի. ընտիր եւ քաջ առաջնորդի, լուսավորչին փոխանորդի Հայաստանեայց հովվապետի. յորդորանօք բարեյսիրի յակոբայ մէ(ծ՞) վարդապետի գմիւռնայ գահին առաջնորդի. ճշմարտութիւն քարոզողի. ես անթոնիս նուաստ հոգի եւ եմ որդի առաքելի. եւ եմ կեղէնքն ակընցի պայս ոտանայորս շարադրեցի. Առ զձեզ աղաչեմ հայրք եւ եղբայրք եւ որքըզ հանդիպիք յայսմ ի տեղիս մի բերան ասացէք յաստուածն յամենայնի եւ բանն ի բարին առաջնորդի։ (Սորեւ երեք տող երկար շարք մը թուանշաններու՝ հանելուկի նման։)

15. (Ուրիշ գրչէ). Թղ. 548ա. Ես Թամբազի որդի անպիտան եւ ոտից փոշի Աստուածատուրս։ Յամի լուսաւորութեան ամենայնի աշխարհի Հայաստանեայց հազարերրորդի երկերիւրերրորդի հնգետասաներրորդի (=1766), եւ յամսեանն Դեկտեմբերի Լին հանդիպեալ սոյն սրբոյ գրի ի Պաղարճուխ քաղաքի, ձեռամբ իմով զայսքանս նուտարեցի. եւ յերեսս անկեալ աղաչեմ ընդերցողաց. յիշել ի հոգ մահու ննջեցեալս միով հայր մերիւ. եւ յիշողդ յիշեալ լիջիք աւուղէն բարեաց։

16. (Նոյն էջը, տարբեր գրչէ՝) Ես քրեցի Պողոսին որդի տիրացու սարգիս ի Թվին ՌՃՁԹ (=1760) յունվարին Ժին։

17. (Այլ գրիչ). Թղ. 207բ. Նուաստ ծառայ տեառն եւ անարժան սպասաւոր բանին, Ազրիանուպօլսեցի Ղեւոնդ Քահանայ Փափազեան յերկրորդում ամի ձեռնադրութեանս 1880 օգոստոս 15 եւ Հայոց ՌՅԼ եւ Նաւասարդի Գ. եկի յայցելութիւն Բազարճըզ քաղաքի (մերձ ի Փիլիպպուպօլիս) եւ մեծ հիւրընկալութեամբ պատուեցայ ի սիրելի ազգայնոց։

18. Թղ. 430ա. Թուական Փրկչին 1880 սեպտեմբեր 5, Թուական Հայոց ՌՅԼ (1330) Նաւասարդ. ԻԴ. Թուական Տաճկաց ١٢٩٧ (1297) Շէվալ ١٢. Թուական Հրէից 5641 Թշրի 12.

Ղեւոնդ Քահանայ Փափազեան
Ազրիանուպօլսեցի
(առժամանակեայ հովիւ ի Բազարճըզ)։

19. Թղ. 508բ. Ես Ազրիանուպօլսեցի Ղեւոնդ Անարժան քահանայս Փափազեան եկեալ ատ ի Բազարճիք յեկեղեցին սրբոյն

Ստեփանոսի նախավկային եւ կեցեալ աւուրս ինչ՝ երբեւ ամիս երկու եւ կէս մեծ պատիւ եւ սէր ցոյց եառն մեզ օրհնեալ Հայազգի ժողովուրդք տեղւոյս, որոյ փոխարէն ինքն Տէր Յիսուս Քրիստոս հատուսցէ յիւր անսպառելի զանձուցն եւ զհոգիս ննջեցելոցն Երանաւէտ կենաց լուսոջն լուսաւորեսցէ. ամէն։ Յամի Հնարհայ Փրկչին 1880 օգոստոս 15 եւ Հայոց ՌՅԼ. Նաւասարդ ամսոյ Գ. յաւուր ուրբաթի եկի եւ ի նոյն ամի ի 27 ամսեանն հոկտեմբերի մեկնեցայ օրհնելով։

Յայսմ ժամանակի քաղաքական կառավարութիւնն էր ազատ ինքնավարութիւն (աւթոնոմի) որ եւ վարէր զիշխանութիւնն ի Փիլիպպուպօլիս բարձրագոյնս։ Ալէքս Վոկորիտէս փաշա (քրիստոնեայ յոյն) ընդ գերիշխանութեամբ Սուլթան Համիտ թագաւորին Թրքաց։

20. (Տարբեր գրչէ)։ Թղ. 430ա. Ես խոնարհ ծառայ Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ բընիկ Ա. պօլսեցի 1893 թուականին Քրիստոսի հանդիպելով այս Թ. փաղարճըք հոս ալ մընացի եւ այս ձերագիրքը 10—13 տարիներէ ի վեր կորսուած եւ մորցուած ըլլալով ես գտայ գրեթէ հողերու մէջ թաղուած։

Յարութ. Գուլեումճուեան 1908 Յունվ. 1։

(Աւելի վարը՝ տարբեր գրչէ). 1917 ապրիլ 20, Թ. փաղարճըք, Անդերեաս Յ. Իկինլիեան։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Ձեռագրիս գրիչ Տէր Գրիգոր քահանայ Սէրթթի մէջ 1662ին ծաղկած է նաեւ (ըստ իրեն՝ գրած) Սաղմոս եւ Ժամագիրք մը (Տաշեան, Մայր Ցուցակ, Թ. 69, էջ 310—313)։

Հմմտ. նաեւ «Գիրք Ձեռնադրութեան» մատենի գրիչ Տ. Գրիգորի հետ (Տաշեան, անդ, Թ. 331, էջ 775—776)։

22.

ԱՒԵՏԱՐԱՆ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Ի ՊԼՈՎԴԻՒ

ԹՈՒՂԹՔ՝ 8 (եւ 2 կազմի թղթեր)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 39½ × 28 × 2։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, իւրաքանչիւր սիւնակ՝ 28½ × 9, առնուած շրջագծերու մէջ։ — ՏՈՂՔ՝ 17։ — ՆԻՒԹ՝ թուղթ հաստ եւ ողորկ, սպիտակ։ — ԿԱԶՄ՝ խաւաքարտեայ, թաւշապատ (բալի գոյն)։ Երկու կողերուն՝ արծաթեայ քանդակներ, որոնցմէ առաջինը կը ներկայացնէ Ս. Խաչը։ Լուրթիւնը՝ 19½ × 15 սմ. մեծութեամբ, եզերուած՝ անկիւնները 4 հրեշտակներու նկարներով եւ 3½ սմ. լայն շրջագծով, իսկ եռեւը՝ Ս. Յարութիւնը՝ նոյն ծաւալով, եզերուած 4 աւետարանիչներու նկարներով։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չունի։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ նոր եւ մաքուր։ — ԳԻՐ՝ բոլորգիր, սեւ մելանով։ — ԽՈՐԱՆ՝ 1 (թղ. 2ա), ոսկեգոյն, համեստ գործ։ — ՆԿԱՐ՝ 1 (թղ. 8բ), ծաղկազարդ սաֆիր մը, վրան մեծադիր խաչ մը, ոսկեդրուագ։ — ԶԱՐԴԱՆԿԱՐՔ՝ 3, պարզ աշխատութիւններ, որպէս կիսախորան դրուած։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ չունի։ — ԴԱՖԱՐԿ՝ թղ. 1բ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՄԶԳ = 1834 Յունուար 27։ — ԳՐԻՉ՝ Պետրոս Դպիր Տէրեայ Ստեփանեան Ա. Պոլսեցի։ — ՏԵՂԻ՝ Փիլիպպուպոլիս (Պլովդիւ)։ — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ թղ. 1ա եւ բդ. 8ա։ — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Պլովդիւի (Փիլիպէ) Ս. Գէորգ եկեղեցւոյ։

Մատեանս է ԱՒԵՏԱՐԱՆ ԻՒՂԱԲԵՐԻՑ (թղ. 2ա—8ա)։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 1ա (ճակատը, ծաղկազարդ շրջանակի մէջ)։ — *Սուրբ Աւետարան Իւղարերից՝ Զորից Աւետարանչաց որոշակի գրեալ։*

Ի Պատրիարգութեան Կոստանդինուպօլսոյ Տեառն Տեառն Ստեփաննոսի Աստուածարեալ Արքեպիսկոպոսի։

Յիշատակ վասն կենդանեաց եւ ննջեցելոց. Փիլիպպուպոլսոյ սուրբ Գէորգ Եկեղեցւոյ։ Յամի տեառն 1834. եւ Հայոց՝ ՌՄԶԳ. յունվարի 27։ Ի Փիլիպպուպոլիս քաղաք։

2. Թղ. 8ա. *Սէ՛ռն բաղձանօք՝ ի յիշատակ իւր եւ համայն իւրայնոց՝ կենդանեաց եւ հանգուցելոց. եւ վասն նորոգ հանգուցեալ դստերն Ֆրանկիլլին. եւ գրել՝ յիշատակ առնելով հրաշագեղ Սուրբ Գէորգ Եկեղեցւոյն Փիլիպպուպոլսոյ՝ ընտրելագոյն գրուածով. Փիլիպպուպոլսեցի Հանդուցեալ մահտեսի Ստեփանեան Սարաֆ մահտեսի Յարութիւն բարեպաշտօն անձն՝ ի չքեղութիւն տէրունական չորից Աւետարանչաց Իւղաբերից՝ եւ ըստ արժանւոյն արծաթապատեալ։ Տէր ընկալցի զվարձս իւր եւ հարուսցէ զփոխարէնն ի կրկին կեանս՝ յողորմութենէ իւրմէ։*

Գրեալ մեծաւ զգուշութեամբ եւ մաքուր եւ ընտիր գրով գեղեցկագունիւ ձեռամբ՝ Տէրեայ Ստեփանեան Դպիր տիրացու Պետրոսին՝ անդրիանուպօլսեցւոյ. ի Փիլիպպուպոլիս քաղաք։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Ձեռագրիս գրիչ Պետրոս Դպիր Տէրեայ Ստեփանեան Ա. Պոլսեցի գրած է նաեւ Պլովդիւի մէջ 1828ին «Սոսրագրութիւն Ս. Գէորգ Եկեղեցւոյ» (տե՛ս «Ցուցակ»իս Թ. 12 ձեռագիրը, Հանդ. Ամս. 1938, էջ 211—214)։

© National Library of Armenia

23.

ԱՒԵՏԱՐԱՆ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Ի ՎԱՌՆԱ

ԹՈՒՂԹՔ՝ 6: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 37 × 27½ × 1: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն· իւրաքանչիւր սիւնակ 10 սնդմ· լայնքով, ներքին լուսանցք 1½ սնդմ·: — ՏՈՂՔ՝ 33: — ՆԻՒԹ՝ թուղթ հաստ եւ յղկուած, փայլուն: — ԿԱԶՄ՝ ամուր խաւաքարտեայ, թաւշապատ (մուք կարմիր), կողերուն՝ արծաթեայ քանդակներով, որոնք կը ներկայացնեն սկիզբը՝ Ս· Խաչելութիւնը, անկիւնները չորս հրեշտակներով, ետեւը Ս· Յարութիւնը, եզերուած Ս· Գրեան չորս նկարիկներով: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ նոր: — ԳԻՐ՝ մեծ բոլորգիր, սեւ մելանով: — ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ թուչնագիր, բազմագոյն: Խորագիրք՝ կարմիր մելանով: — ԽՈՐԱՆՔ, ԶԱՐԴԱՆԿԱՐՔ եւայլն· չունի: — ԴԱՏԱՐԿ՝ թղ· 1 եւ 6 (որպէս պահպանակ): — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՄԿԱ (= 1812): — ԳՐԻՉ՝ Տ· Մելէոն քհն·: — ՏԵՂԻ՝ Կ· Պոլիս: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ թղ· 5բ: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ վառնայի Ս· Սարգիս եկեղեցւոյ:

Մատեանս է ԱՒԵՏԱՐԱՆ ԻՒՂԱԲԵՐԻՑ (թղ· 2ա—5բ):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ· Նօտարագիր· թղ· 5բ· — Յիշատակ է չքեղազարդ պատկերաւոր եւ արծաթապատ Իւղաբերից սուրբ Աւետարանս ի Վառնայ Սուրբ Սարգսի Եկեղեցւոյն· որ ետ Վառնացի Փօս պըլըմ պարոն մահտեսի Սարգիսն՝ վասն իւր եւ վասն համայն կենդանեաց եւ ննջեցելոցն իւրոց:

Արդ՝ խնդրի է վայելողացդ զսա, միով Հայր մերիւ յիշել առ Տէր, եւ յիշողդ՝ լերուք յիշեալք ի Տեառնէ մերմէ ամէն:

Գրեցաւ ի Կոստանդնուպոլիս ի ՌՄԿԱ թուականիս մերոյ, յունվարի Ա, ձեռամբ սուրբ Հրեշտակապետ Եկեղեցւոյ յեռին սպասաւոր Տէր Մելքոն տրուպ քահանայի:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ· Զեռագրիս գրիչ Տէր Մելքոն քհյ· (աթոռակալ Պալաթու Ս· Հրեշտակապետ եկեղեցւոյ) օրինակած է անդ նաեւ 1817ին «Պատմութիւն եւ պատճառ եւ կերպ ստանալոյն ազգիս Հայոց, Յունաց Ս· Հրեշտակապետ եկեղեցւոյն··· առ զրան Պալաթու···» գրքոյկը (Մելգոն Աստուր՝ Երեքդարեան Պատմ· Ս· Հրեշտակապետ Եկեղեցւոյ Պալաթու, էջ 42), զոր ապա ճոխացուցած 1837ին՝ նոր տեղեկութիւններով (Անդ, էջ 43 եւ 133· հմմտ· Տաշեան, Մայր Ցուցակ, էջ 912), իսկ 1839ին օրինակած է «Գիրք ճակատամարտութեան»ը (Տաշեան, անդ, 937):

24.

ԱՒԵՏԱՐԱՆ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Ի ՎԱՌՆԱ

ԹՈՒՂԹՔ՝ 14: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 42 × 32½ × 1: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ խառն (միասիւն եւ երկսիւն), 32 × 26, առնուած կապոյտ շրջագծի մէջ: — ՏՈՂՔ՝ 21: — ՆԻՒԹ՝ թուղթ հաստ եւ յղկուած: — ԿԱԶՄ՝ խաւաքարտեայ թաւշապատ (գոց կարմիր), կողմին արծաթեայ քանդակներով, սկիզբը՝ Ս· Յարութիւնը եւ ետեւը խաչէն վառ առնուիլը: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ նոր· կը պակսին կէսերը Ա· եւ ԺԴ· անգիր թուղթերուն: — ԳԻՐ՝ բոլորգիր մեծ, սեւ մելանով: — ՆԿԱՐՔ՝ 4, աւետարանիչներու սկզբնաւորութեան հանդիպակաց էջերուն վրայ (թղ· 3բ, 5բ, 7բ, 9բ), մեծադիր՝ ամբողջ էջ, իսկ ուրիշ 4 նկարներ՝ անոնց կէս մեծութեամբ կը ծառայեն իբր կիսախորան՝ աւետարաններու սկզբնաւորութեան (թղ· 4ա, 6ա, 8ա, 10ա): Բաւական յաջող գործեր, հարազատ եւ նոյն գոյներով: — ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ հրեշտակագիր եւ թուչնագիր: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ չունի: — ԴԱՏԱՐԿ՝ թղ· 1, 2, 3ա, 12, 13, 14: — ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ· կը թուի ԺԹ· դարու սկիզբը: — Գրիչ՝ անյայտ: — ՏԵՂԻ՝ անծանօթ: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ վառնայի Ս· Սարգիս եկեղեցւոյ:

Մատեանս է ԱՒԵՏԱՐԱՆ ԻՒՂԱԲԵՐԻՑ (թղ· 4ա—11բ):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ· Բուն գրչինը կը պակսի· կողքին արծաթեայ Ա· քանդակին վրայ՝ Քրիստոսի դամբանին վերեւ՝ փորագրուած է· «Յիշատակ է Իւղաբերից սուրբ աւետարանս Վառնա սուրբ Սարգիս եկեղեցւոյն Բալոյուցի Հաւա քաղաքն Մէլգոնեան աստուածասէր Կիրակոս աղա որս վարցահատույց աչն անեղին լեցի յամի տեառն 1847 եւ յուլիսի 1»:

Թղ· 3բ· Կարմիր մելանով գրուած նոյնը՝ սրբագրուած· «Յիշատակ է՝ Իւղաբերից սուրբ Աւետարանս Վառնայու սուրբ Սարգիս եկեղեցւոյն՝ Բալոյուցի Հաւա գիւղէն Մելքոնեան Աստուածասէր Կիրակոս Աղայի, որոյ վարձահատույց աչն անեղին լեցի· յամի տեառն 1847 եւ յուլիսի 1»:

25.

ՀԱԻԱՔԱԾՈՅ ԲԺՇԿԱՐԱՆ

Ի ՊԼՈՎԴԻՒ

ԹՈՒՂԹՔ՝ 131: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17½ × 11 × 2: — ԹԵՐԹՔ՝ 11, Ա·—ԺԱ· խառն եւ պակասաւոր (Ա·—Բ·՝ 10ական, Գ·՝ 12, Դ·՝ 16, Ե·՝ 14, Զ·—Է·՝ 16ական, Ը·՝ 6, Թ·՝ 16, Ժ·՝ 10, ԺԱ·՝ 5): — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, 14 × 8: — ՏՈՂՔ՝ 18—20: — ՆԻՒԹ՝ թուղթ, միջակ հաստ եւ ողորկ: — ԿԱԶՄ՝

խաւաքարտեայ հին կաշեպատ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ գէշ չէ, բայց քանի մը թղթեր մէջէն եւ վերջաւորութենէն կը պակսին· չունի նաեւ նախատը: — ԳԻՐ՝ բոլորգիր միջակ, անճաշակ: — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ ընդհանրապէս կարմիր մելանով: — ԶԱՐԴԱՆԿԱՐՔ եւայլն· չունի: — ԴԱՏԱՐԿ՝ չկայ: — ԺԱՄԱՆԱԿ՝ իբր ԺԸ·—ԳԹ· դար: — ԳՐԻՉ եւ ՏԵՂԻ՝ անծանօթ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ կը պակսին: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ անձնականիս· գնած եմ զայն Շուտէնցի ազգայինէ մը 1939ին:

Մատեանս է Հաւաքածոյ մարդկային կազմախօսական–բժշկական եւ բուսաբանական դիտելիքներու, գրի առնուած հայերէն եւ հայատառ թուրքերէն լեզուներով:

Կը բովանդակէ·

1· Ա· Թղ· 1ա—5ա· Նախադրութիւն–բացատրողական մը (Թրքարարբառ):

Բ· Թղ· 5ա—57բ· Կը խօսի 26 գլուխներու մէջ (Ա·—ԻԶ·) մարդակազմութեան, մարդկային զանազան զգայարանաց, գործարաններու եւ անդամներու գերի եւ դարմանման այլազան ձեւերու մասին, յիշատակութիւններ ընելով այս առթիւ Գալիանոսի (թղ· 2բ, 5ա, 54բ), Ճալինոսի (թղ· 42ա), Արպիանոսի (թղ· 44ա), Մասեհի (թղ· 45ա), Զաքար օղլուի (թղ· 45ա) եւ Յովհաննէս հէքիմի (թղ· 52բ) մասին (գրուած է հայատառ թրքարարբառ):

2· Թղ· 57բ—99բ· 61 գլուխներու մէջ (Ա·—ԿԱ·) կը խօսուի զանազան բոյսերու, հունտերու, խոտերու եւ անոնց բուժական յատկութեանց մասին (նոյնպէս թրքարարբառ, տեղ տեղ հայերէն բացատրութիւններով):

3· Թղ· 99բ—131բ· Այս բաժնին մէջ, որ հայերէն լեզուով է, 136 փոքրիկ գլուխներու մէջ (Ա·—ՃԼԶ·) կը տրուին նոյնքան գեղերու պատրաստութեան կերպերը, որոնցմէ մի քանի հատ կու տանք ստորեւ:

Թղ· 99բ· Ա· Վասն դալիեան եախըյի· Իե տրամ խիժ, Իե տրամ մօմ· սեւ ձութով հալէ եղջուրին վրայ քսէ:

Բ· Վասն թելօն չինելոյ· Ը տրամ· խէժ· Ժ տրամ մօմ· ԺԲ տրամ սեւ չամիչ· Ժ տրամ սեւ ձութ· այնչափ ծեծէ մինչեւ որ ըլնայ:

Գ· Վասն սրգէ մէլհէմի· Ժ տրամ միւրաեսենդ· Ժ տրամ ախլրկ, երկուք մխատեղ փոշի ըրէ· յառաջ Գ գդալ եղուղ ալ էրէ· յետոյ քացախը կերցուր մինչեւ ըլնայ:

Դ· (Թղ· 100ա)· Վասն եաղլամայ· ԺԵ տրամ սապօն· Ժ տրամ ախլրկ, երկուք տրամ մխատեղ փոշի արէ· Ժ տրամ սնդիկ· Գ տրամ սիւլէմանի, զէյթին եաղով մեռցուր· ԲԾ տրամ կարաք եղ հալէ· հավանը մուր ալ լեց որ կապուտ ըլնայ:

Ե· Վասն դեղին մէլհէմի· ԳԾ տրամ խիժ· ԲԾ ձէթ· Ծ տրամ տալ մօմիով եփէ քամէ:

Զ· Վասն խասապ մէլհէմի· Լ տրամ խիժ, Խ տրամ պալ մօմի· Ե հավանիվայ· Ծ տրամ սեւ ձութ· մէլհէմ ըրէ:

Է· Վասն կանաչ մէլհեմին· Ծ տրամ խիժ· Կե տրամ զէթին եաղի· ԺԵ տրամ պալ մօմի· կրակին վրայ եփէ· վար առած ժամանակզ տրէմի խալեմի ժէնդ էս քանի պաղէ ցանէ, յետոյ քամէ· եւայլն:

Ն· ԳԱՍԱՊԵԱՆ

N. ADONTZ — Samuel l'Arménien, roi des Bulgares. Bruxelles, Académie, 1938. [Արտատպ· Mémoires Acad. R. de Belgique, Cl. d. Lettr. XXXIX.] 63 էջ, գին՝ 15 ֆր·:

Բուլգարներու պետութիւնը բիւզանդական տիրապետութեան դէմ դիւցազնօրէն պաշտպանողը՝ Սամուէլ Կոմիտոպուլոս (997—1040) Հայ մըն էր, որ թէեւ պատմական նորութիւն մը չէ, սակայն հեղինակը հոս կ'ուսումնասիրէ Բուլգարներու երկրորդ պետութեան պատմութիւնն իր ամբողջութեամբը՝ մասնաւորապէս ժամանակագրական տեսակէտէ: Կ'օգտագործէ աւելի լայն կերպով քան որ մինչեւ հիմայ եղած է, արեւելեան աղբիւրներն եւ իրապէս երեւան կը բերէ բազմաթիւ ոչ աննշանակ համաձայնութեան եզրներ: Բ· հատուածին մէջ կը խօսի Սամուէլի ծագման մասին հետաւորութեամբ Ասողիկի, զոր կը պաշտպանէ ամէն հնարաւոր առարկութեանց դէմ: Սամուէլին հայրը Նիկողայոս իր երկու Սամուէլ եւ Դաւիթ որդիներով Դերջանէն Կ·Պոլիս (ἑταιρεία) կու գայ եւ հոն κόμης կ'անուանուի: Ասողիկի համաձայն ապա Ռոմանոսին՝ Բուլգարներու ցարին ծառայութեան մէջ կը մտնէ եւ անոր մահէն ետքը (997/98· ժամանակագրութեան մասին հմմտ· էջ 13 յջ·) իր որդիները Բուլգարներու առաջնորդութիւնն իրենց ձեռքն կ'առնեն: Երբ կեդրենոս չորս κομητόπουλοι կամ ըստ Ասողիկի «կոմսաձագ»ը կը յիշէ, այսու կը խառնաշփոթէ նա Սամուէլի եւ Դաւիթի՝ բուն «կոմսաձագ»երուն հետ Մովսէս եւ Ահարոն՝ Բուլգարեայ ցարին՝ Պետրոսի Յովհաննէս եղբօր որդիներն — երկուքն ալ մօր կողմէ հայ, որոնք հետեւարար

© National Library of Armenia